

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՄՈՌԱՅՎԱԾ ՀՈՒՆԱԳԻՐ ՄԻ ՀՈՒՇԱՐՉԱՆ

Հուշարձանների ճակատագրերը, ինչպես մարդկանցն ու ժողովուրդներինը, բազմազան են լինում: Դրանցից շատերը չեն դիմանում ժամանակի ոչնչացնող ազդեցությանը, մի մասը դարեր շարունակ հողածածկույթի տակ անհայտության մեջ մնալուց հետո հայտնաբերվում ու նոր կյանք է ստանում, որոշներն էլ հայտնաբերվում, սակայն անփութության կամ չար դիտավորության պատճառով ոչնչացվում ու մեկընդմիջտ անհետանում են:

XIX դարավերջին Կապապոլկիայի տարածքից՝ Կեսարիայի շրջանից հայտնաբերվել է երկաթե սաղավարտածև մի դիմակ՝ հունարեն արձանագրությամբ: Արձանագրությունը բաղկացած է երկու մասից, որի առաջին մասում ընթերցվում է՝ «Տիգրան թագավոր Հայ(ոց)»: Գրակիր հուշարձանը 1891 թ. ուղարկվել է Կոստանդնուպոլիս¹, որից հետո դրա մասին որևէ տեղեկություն հայտնի չէ:

Արձանագրության առաջին (և, հավանաբար, միակ) հրապարակումը եղել է 1908 թվականին, սակայն այն չի մտել հայագիտության շրջանառության մեջ: Որքան էլ տարօրինակ է, այս ուշագրավ տեղեկությունը վրիպել է հայագետների ուշադրությունից, որի պատճառը, թերևս, տեղեկության հրապարակումն է ոչ շատ հայտնի մի ժողովածուի էջերում²:

Արձանագրության երկու հատվածներն ունեն հետևյալ տեսքը.

(ա)

TEK

PAN BA

ΣΕΛΕΑ

ΣΑΡΜΑΝ

(բ)

ΑΠΟΚΤΗΣΕΘΣ.ΚΟΣΜΟΥ.ΕΦΘΑΣΑΕΟΥΤΕΣΑΡΑΙΣ.

ΧΙΑΙΑΔΔΙΣ.ΠΕΝΤΑΚ

ΟΣΙΑΣ ΑΡΑΝΤΑΡΙΟ

Արձանագրության հատվածները գրված են ոչ գրագետ հունարենով և, չնայած փոքրածավալ լինելուն, բավականին բարդություններ են առաջացնում ընթերցման ժամանակ: Սեր խնդրանքով խրթին այս հատվածները հունարենից թարգմանեց անտիկ դարաշրջանի մասնագետ, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Խաչիկյանը, որը շնորհակալությամբ ներկայացնում ենք ստորև.

(ա)	
TEKPAH	Տիգրան
ΒΑΣΕΛΕΑΣ	արքա
ARMAN	Հայ(ոց)
(բ)	
ΑΠΟΚΤΗΣΕΩΣ.	հարգված
ΚΟΣΜΟΥ.	մարդկանց կողմից
ΕΦΘΑΣΑΕ	ճանաչված (?)
ΟΥΤΕ	առանց իսկ
ΣΑΡΑΙΣ.	քառասուն (?)
ΧΙΛΙΑΔΑΙΣ.	հազար
ΠΕΝΤΑΚΟΣΙΑΣ	հինգհարյուր
ΑΡΑΝΤΑΡΙΟ	(անգամ պատմվ) մաքրված (լինելու)

Մասիվան դիմակների կիրառությունը բավական տարածված է Հին Աշխարհում (Եգիպտոս, Միկենք, Իրան, Ասորեստան, նաև Մեքսիկա և այլն) և կապվել է անդրաշխարհի հետ առնչվող հավատալիքներին: Մական այդ ծիսակարգը լիովին բացակայում է Հայաստանում, ինչից, թերևս, կարելի է ենթադրել, որ թաղվողը եղել է ոչ հայազգի, Հայոց արքայի օտարազգի զորավարներից մեկը:

Տառասխալների առկայությունից, ոչ գրագետ հունարենով գրությունից կարելի է ենթադրել, որ գրության կազմողը չի եղել ո՛չ հույն, ո՛չ էլ հայ (հակառակ դեպքում արքայանունը ճիշտ կգրվեր): Ելնելով երկրանվան Arman գրելաձևից հնարավոր է ենթադրել, որ գրության կազմողը ունենցել է սեմական ծագում:

Ո՞վ կարող էր լինել արձանագրության մեջ նշվող Հայոց արքա Տիգրանը:

Սեր պատմությունից հայտնի այդ անունը կրող առաջին արքան Ք.ա. 6-րդ դարում իշխած Տիգրան Երվանդյանն է: Նրա թեկնածությունը բացառվում է այն պարզ պատճառով, որ նրա օրոք այդ ժամանակշրջանում հունարենը չի կիրառվել մեր տարածաշրջանում:

Տիգրան Բ-ի հոր՝ Տիրան-Տիգրան Ա-ի Կապադովկիայում լինելու մասին որևէ տեղեկություն չունենք:

Հունագիր հուշարձանը կարող էր վերաբերել Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանին, ավելի որոշակի՝ Միհրդատ Եվպատորի դաշնակցությամբ նրա կապադովկիական արշավանքների (Ք.ա. 93 և 91 թթ.) տարիներին³: Եթե այս կարծիքը հաստատվի, հունագիր հուշարձանը կարող է համարվել նշված արշավանքների մասին առայժմ հայտնի միակ նյութական վկայությունը:

Չի բացառվում, սակայն, որ հունագիր հուշարձանը կապված լինի Տիգրան Գ-ի, որը Ք.ա. 20 թվականին Հռոմի կողմից ռադարկվից Հայաստան⁴, կամ Հայոց գահին հավակնող հռոմեական դրածոներ Տիգրան Ե-ի (մոտ 6 թ.)⁵ և Տիգրան Զ-ի (60-61 թթ.) հետ⁶, որոնք անցել են Կապադովկիայով:

Ավարտելով այս համառոտ հաղորդումը՝ նշենք, որ հավելյալ փաստերի բացակայությունն առայժմ հնարավորություն չի տալիս ստույգ որոշելու Հայոց արքա Տիգրանի ինքնությունը: Մակայն Հայոց արքայի անունով արձանագրված մահադիմակի գտնվելը Կապադովկիայից ինքնին ուշագրավ երևույթ է, և մեր հաղորդման հիմնական նպատակն այդ երևույթին ու հանդիսավի մոռացված հունագիր հուշարձանին մասնագիտական շրջանակների ուշադրության հրավիրումն է:

MOVSISYAN ARTAK

A FORGOTTEN GREEK-WRITTEN MONUMENT

(Summary)

In 1891 was published an information about the iron mask in form of the helmet with two Greek inscriptions from Kesaria, but attention to the publication was not allocated.

In present article are considered some questions concerning of the belonging, time of creation and other details about the Greek-written monument.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Jerphanion P.G., Jalabert P.L., Inscriptions d'Asie Mineure (Pont, Cappadoce, Cilice), "Mélanges de la Faculté Orientale de l'Université Saint-Joseph", III, Fasc. I, Beyrouth, 1908, p. 470 (N 59).
2. Անշուշտ, սրանով չի կարելի արդարացնել հայագետների անուշադրությունը, մանավանդ, որ խնդրո առարկա հրապարակումը (հատորի 437-478 էջերը՝ նույն տեսքով) լույս է տեսել մաև 42 էջանոց առանձնատիպով:
3. Տիգրան Բ-ի կապադովկիական արշավանքների մասին կա մեծածավալ գրականություն. տե՛ս, օրինակ, Մանանդյան Հ., Երկեր, ԷԱ, Ե., 1977, էջ 145-146, 430-436; Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ), Է. I, Ե., 1971, էջ 558-561 (բաժնի հեղինակ՝ Գ.Խ.Սարգսյան):

4. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 285-287; Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ), հ. I, էջ 630-632 (րաժմի հեղինակ՝ Գ.Խ.Սարգսյան); Хачикян А., Армения в сфере международной политики накануне и в начале нашей эры, 1999, Е., 1999, с 24-27:
5. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 295-297; Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ), հ. I, էջ 709-710 (րաժմի հեղինակ՝ Ս.Տ.Երեմյան); Хачикян А., նշվ. աշխ., էջ 46-49:
6. Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 332-336; Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ), հ. I, էջ 740-749 (րաժմի հեղինակ՝ Ս.Տ.Երեմյան):